

կացող եր, քայց զԳրիգորն առաւել պատանային հաւնար կուղարկեմք, վասն որոյ յսկան առնեմ զնոսս քո Սրբութեանդ քան որ կարեմք»:

Ազարիա ինչպէս կը տեսնուի կ'ուզէ Հռոմի պապին բարեյօթարութիւնը ի նըպաստ ազգին ծառայեցնել և շատ դժուարաւ ձեռք բերուելիք գանձ մը ստանալ Պապը յորդորելով կատարելու հայերէն Աստուածաշունչին տպագրութիւնը, զոր Հայ կաթողիկոսները և պատրիարքները իրենց սեպհական միջոցներով այն դժնգակ միջավայրին մէջ՝ ուր ապրիլ պարտաւորուած էին՝ երբեք կարող պիտի չըլլային իրագործել:

Գրիգոր ԺԳ. Թերեւս լրջօրէն ուշադրութեան առնէր Հայ կաթողիկոսին խընդիրքը, քանի որ Արևելեան ժողովուրդները Հռոմի փարախը առաջնորդելու գաղափարով խիստ խանդավառուած էր եւ ասոր համար Թերեւս պատրաստ ըլլար աւելի զոհողութիւններ ընելու:

Սակայն Հայոց դժբախտ ճակատագիրը հոն ալ իր դերը կը կատարէ և Գրիգոր ԺԳ. կը մեռնի 1585ին, առանց կատարելու Ազարիա կաթողիկոսին առաջարկը:

Ո՛չ Հայոց վարժարանը կը բացուի և ո՛չ ալ Հայ Աստուածաշունչի տպագրութեան կը ձեռնարկուի և ո՛չ ալ Արևելեան